ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար գրասենյակային հաշվողական սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԾՁԲ-18/01» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«22» փետրվարի 2018թ.
ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Ավետիք Ավագյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ ԳՊ/ԳԱՊ) ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

հանձնաժողովի անդամներ՝

Էդգար Տոնականյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի աշխատակազմի ղեկավար,

Կարեն Մելքոնյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

Արմինե Ալիխանյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

Սարգիս Մալխասյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) ՀՀ Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար,

հանձնաժողովի քարտուղար՝

Արուս Խաչատրյան՝ (Գնման պատասխանատու /ընթացակարգի համակարգող՝ ԳՊ/Մհմ) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

1. Տեղեկատվություն՝ «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» (ԷԿԵՆԳ) ՓԲԸ-ի կողմից ստացված կարծիքի վերաբերյալ.

21.02.2018թ. «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» (ԷԿԵՆԳ) ՓԲԸ-ից ստացվել է տեղեկատվությունը /կցվում է/, համաձայն որի «Բևեռային ուղի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերն ամրագրված են վավեր էլեկտրոնային ստորագրությամբ:

2. Հանձնաժողովը որոշեց «Ստարտկոպի» ՍՊԸ-ի, «Բևեռային ուղի» ՍՊԸ-ի, «Այ Սերվիս» ՍՊԸ-ի, «ՍեԳ» ՍՊԸ-ի, «ԱՐԹՈՒՐ ՕՀԱՆՅԱՆ ՄԱՅԻՍԻ» Ա/Ձ-ի, «ԳՐԻԳՈՐ ԱՅՎԱԶՅԱՆ» ԱՁ-ի կողմից ներկայացված հայտերը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. 1-ին, 2-րդ, 3-րդ, 8-րդ, 12-րդ չափաբաժինների մասով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների ներկայացված գնային առաջարկները գերազանցում են սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների գնման հայտով սահմանված գները, ինչով պայմանավորված անհրաժեշտություն է առաջանում առաջարկված գների նվազեցման նպատակով մասնակիցների հետ վարելու միաժամանակյա բանակցություններ՝ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

-նիստը կասեցնել, և բանակցություններ վարելու նպատակով հաջորդ նիստը հրավիրել 2018թ. փետրվարի 27-ին՝ ժամը 11:00-ին, <<ՀՀ դատական դեպարտամենտ>> ՊԿՀ-ի վարչական շենքում (ք. Երևան, Վ. Սարգսյան 5):

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ Ավետիք Ավագյան

Անդամներ՝

Էդգար Տոնականյան

Կարեն Մելքոնյան

Արմինե Ալիխանյան

Սարգիս Մալխասյան

Քարտուղար՝ Արուս Խաչատրյան

Срд, 21 Фев 2018 10:31

Re: <<ՀՀ դատական դեպարտամենտ>> ՊՀԿ: Ticket 48861

От: Customer Support <cssupport@ekeng.am>

Кому: Datakan Departament <ddgnumner@mail.ru>

Հարգելի գործընկեր,

Տեղեկացնում ենք, որ այսուհետ էլ.ստորագրության վավերության ստուգման գրությունները անհրաժեշտ է ուղարկել փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային «Mulberry» համակարգով՝ ուղղված ԷԿԵՆԳ ՓԲԸ-ի տնօրեն Արթուր Խաչատուրյանին:

Անհրաժեշտության դեպքում խնդրում ենք Ձեր գրությունն ուղարկել վերոնշյալ համակարգով՝ գործին համապատասխան ընթացք տալու նպատակով:

Հ.Գ. Ի պատասխան Ձեր հարցմանը՝ տեղեկացնում ենք, որ «Բնեռային ուղի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1, Հավելված 2, Հավելված 2.1, Հավելված 3, Հավելված 4, Հավելված 8 pdf. ձևաչափով էլեկտրոնային փաստաթղթերը ներառում են Ամալյա Հակոբյանի (ՀԾՀ՝ 6511360180) էլ. ստորագրությունը:

Ստորագրության դաշտի անհրաժեշտ բոլոր բաղադրիչները՝ ամսաթիվ, սերիա համար, Hash ալգորիթմ, էլ. հավաստագրի ակտիվ կարգավիճակ և այլ մանրամասներն առկա են, ուստի հաստատում ենք, որ փաստաթուղթն ամրագրված է վավեր էլեկտրոնային ստորագրությամբ:

Հարգանքով՝

Գոհար Վարդանյան

Հաճախորդների սպասարկման բաժին

Էլեկտրոնային Կառավարման Ենթակառուցվածքների Ներդրման Գրասենյակ ՓԲԸ

e-mail՝ cssupport@ekeng.am

Հեռ՝ 374 60 464 504

www.ekeng.am